



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 հունիսի 2020 թվականի թիվ 54-Ա
ք. Երևան

«ՊԼԱՆԵՏ ԲԱՖՖԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՊԼԱՆԵՏ ԲԱՖՖԻ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի հունիսի 3-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՊԼԱՆԵՏ ԲԱՖՖԻ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«НТВ Мир» «Охотник и рыболов» «Шансон-ТВ» «Муз ТВ» «Моя Планета»	31.12.2020թ.
«USU» «Ռեն ՏՎ» «USU Քիդս» «USU Լավ» «5 Կանալ» «Իզվեստիյա» «Պերեց» «Դոմաշնիյ» «ՌԲԿ» «Բրիջ ՏՎ» «Բրիջ ՏՎ Դանս»	31.12.2020թ.
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ կինո» «Վրեմյա. դալոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Սուզիկա Պերվոգո» «Բոբյոր» «Պոբեդա» «Սուժսկոյ» «Ամեդիա Հիթ Էյջ Դի»	31.12.2020թ.
«Բոկս ՏՎ» «Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կինոուժաս» «Ավտո Պլուս» «Մալիշ-ՏՎ» «ՏՆՏ Մյուզիք»	31.12.2020թ.

<p>«Մատչ! Պլանետա» «Կինոպրեմիերա» «Կինոխիտ» «Կինոսվիդանիտ» «Կինոսենյա» «Մուժսկոյե Կինո» «Ռոդոնոյե Կինո» «Նոստալգիա ՏՎ»</p>	31.12.2020թ.
<p>«Discovery Channel» «Discovery Science» «РТР-Планета» «Россия-24»</p>	31.12.2020թ.
«5-րդ ալիք»	անժամկետ
<p>«THT- Comedy» «THT4 International» «Friday International»</p>	31.12.2020թ
«Շանթ»	անժամկետ
<p>«Paramount Comedy» «MTV Hits» «MTV Rocks» «MTV Dance» «Spike» «Nickelodeon»</p>	անժամկետ
<p>«National Geographic» «Nat Geo Wild» «Fox»</p>	անժամկետ
<p>«Կինոման» «Ֆիլմ Zone» «Հայ TV» «Թավա TV» «ԽաղԱլիք» «ArmNews24» «Բազմոց TV» «Ֆիթնես TV» «Մուզոն»</p>	անժամկետ